

ք. Երևան

«30» «04» 2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) մի կողմից, և <<ՄԱՆՄԱՐ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը:

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից:

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (ըրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողը իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կնիքով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 237217900 (երկու հարյուր երեսունյոթ միլիոն երկու հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Գնորդի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է

Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Ք. Երևան, Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ աշխատակազմի

գործառնական վարչություն

Հ/Հ 900011005130

Հ/Հ 02698732

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

Վ. Գապարյան

(ստորագրություն) Վ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ ՄԱՆՄԱՐ >> ՓԲԸ

ք. Երևան, Ղ. Փարպեցի 9, բն. 7

Էջ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան

Հ/Հ 217001025956001

Հ/Հ 02533144

Տնօրեն՝

(ստորագրություն)

Ա. Հարությունյան

Վ.Տ.

02533144

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Զախարածիները	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Ապրանքի						
		Անվանումը,	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը
1	22111110-36	Դասագրքեր	Գնման առարկա է հանդիսանում «Այբբենարան» /1-ին դասարանի դասագիրք/, հեղ.՝ Վ.Սարգսյան Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ և ընդգրկմամբ, համապատասխանի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին, կառուցվի սովորողների նախնական գիտելիքների և հմտությունների վրա: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Այն պետք է հիմքում ունենա համամարդկային և ազգային արժեքները զարգացնող ներուժ, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Դասագիրքը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը, բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի ձևավորմանը, նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Դասագիրքի բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվեն շարադրանքի մատչելիությունը, միջառարկայական կապերը: Դասագիրքի բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Նյութերն ու առաջադրանքները պետք է հնարավորություն ընձեռեն կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է	հատ	28 218	1500	42327000	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

			շարադրված միտքը, փոխհատուցի այն, ինչը դժվար է արտահայտել և ընկալել գրավոր խոսքով: Պատկերազարդումը պետք է ներառի սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Դասագիրքը պետք է ընդգրկի նախաայբբենական շրջան (ընդհանուր պատկերացում բանավոր խոսքի մասին, գաղափար պատմության /նկար-պատմություն/ մասին, խոսքի տրոհումը նախադասությունների, հասկացություն նախադասության մասին, նախադասության սկիզբը և վերջը և այլն), այբբենական շրջան (հայերենի հնչյուն-տառերի ուսուցում, տպագիր և ձեռագիր տառերի ճանաչում, հայերենի տառերը գրելու ուսուցում, բառեր գրելու ուսուցում, նախադասություն գրելու ուսուցում, տեքստ գրելու ուսուցում) և հետայբբենական շրջան (աշխատանքներ խոսքի, բառի, նախադասության և տեքստի ընթերցման և գրելու կարողությունների ամրակայում): Տեխնիկական չափանիշները Էջերի քանակը՝ - 156 Չափսը՝ - 260 X 205 Տպագրությունը՝ - օֆսեթ 4 գույն, 80գր Կազմը՝ - 4գույն 280 գ, թելակար, լամինացիա, թերմոսոսինձ, թելակար					
2	22111110-38	Դասագրքեր	Գնման առարկա է հանդիսանում «Մայրենի 1» /1-ին դասարանի դասագիրք/, հեղ.՝ Վ.Սարգսյան, Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ և ընդգրկմամբ, համապատասխանի չափորոշային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին, կառուցվի սովորողների նախնական գիտելիքների և հմտությունների վրա: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Այն պետք է հիմքում ունենա համամարդկային և ազգային արժեքները զարգացնող ներուժ, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Դասագիրքը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը, բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշյով սահմանված կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի ձևավորմանը, նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Դասագիրքի բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվեն շարադրանքի մատչելիությունը, միջառարկայական կապերը: Դասագիրքի բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Նյութերն ու առաջադրանքները պետք է հնարավորություն ընձեռեն կազմակերպելու	հատ	17 678	1150	20329700	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

			Պատկերազարդումը պետք է համապատասխանի տեքստին, օգնի արտահայտելու տեքստում շարադրված միտքը, փոխհատուցի այն, ինչը դժվար է արտահայտել և ընկալել գրավոր խոսքով: Պատկերազարդումը պետք է ներառի սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Դասագիրքը պետք է զարգացնի կարդալու հմտություններ (տեքստի ընթերցանություն, արտասանական ունակությունների զարգացում), կարդացածի ընկալում, աշխատանք տեքստի շուրջ (տեքստի ընկալում և վերարտադրում, ընթերցածի թեմայի որոշում և բանավոր համառոտ շարադրում, տեքստի հերոսների առանձնացում և նրանց վարքագծի վերաբերյալ պարզագույն դատողությունների ներկայացում), խոսքի զարգացում (խոսքային արտահայտչական բազմազան ձևերը (ողջույն, հրաժեշտ, շնորհակալություն) և դրանց արտահայտման եղանակները, երկխոսությունը, դրա առանձնահատկությունները և այն վարելու կանոնները): Դասագիրքը պետք է ներկայացնի լեզվական տարրական գիտելիքներ (հայերենի հնչյունները, ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, ձայնավորների ուղղագրությունը, վանկ, ձայնավորների վանկարար դերը: Միավանկ և բազմավանկ բառեր, բառախմբեր, բառ և նախադասու թյուն և այլն), կետադրական նշանները (վերջակետ, ստորակետ): Տեխնիկական չափանիշները Էջերի քանակը՝ - 64 Չափսը՝ - 260 X 205 Տպագրությունը՝ - օֆսեթ 4 գույն, 80գր Կազմը՝ - 4գույն 280 գ. լամինացիա, թերմոսոսինձ, թելակար					
3	22111110-47	Դասագրքեր	Գնման առարկա է հանդիսանում «Ռուսաց լեզու 2 /Русский/» /2-րդ դասար. դասագիրք/, հեղ.՝ Ն.Բայբության, Ի.Յակուբովա Բովանդակային չափանիշներ Դասագիրքը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը, բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշյով սահմանված կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի ձևավորմանը, նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Դասագիրքի բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվեն շարադրանքի մատչելիությունը, միջառարկայական կապերը: Դասագիրքի բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Դասագիրքը պետք է ապահովի միջմշակութայնություն, միջառարկայական ինտեգրում, բազմամակարդայնություն, բազմագործառնություն: Նյութերն ու առաջադրանքները պետք է հնարավորություն ընձեռեն կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Դասագրքի	հատ	28 418	1595	45326710	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

			տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է համապատասխանի տեքստին, օգնի արտահայտելու տեքստում շարադրված միտքը, փոխհաստուցի այն, ինչը դժվար է արտահայտել և ընկալել գրավոր խոսքով: Պատկերազարդումը պետք է ներառի սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Դասագիրքը պետք է զարգացնի կարդալու հմտությունները, կարդացածի ընկալումը, տեքստի բովանդակության ընկալումը, սովորեցնի աշխատել տեքստի շուրջ, առանձնացնել նորաձանոթ բառերը և ընկալել դրանց իմաստը: Պետք է զարգացնի ընթերցումը ու հաղորդակցման կարողությունը, հասկացողություն տա տեքստի մասին, հաղորդի գրական տարրական գիտելիքներ և լեզվական տարրական գիտելիքներ: Դասագիրքը պետք է զարգացնի խոսքն ու հաղորդակցման կարողությունը, հասկացողություն տա տեքստի մասին, հաղորդի գրական տարրական գիտելիքներ և լեզվական տարրական գիտելիքներ: Դասագիրքում պետք է ապահովվեն միջառարկայական կապերը (արվեստ, տեխնոլոգիա, հասարակական գիտություններ): «Ռուսաց լեզու 2» դասագիրքը պետք է ընդգրկի տարրական դպրոցի 2-րդ դասարանի առարկայական ծրագրի առաջին կեսի նյութը: Տեխնիկական չափանիշները Էջերի քանակը՝ - 128 Չափսը՝ - 260 X 205 Տպագրությունը՝ - օֆսեթ 4 գույն, 80գր Կազմը՝ - 4գույն 280 գ, լամինացիա, թերմոսոսիմ, թելակար					
4	22111110-55	Դասագրքեր	Գնման առարկա է հանդիսանում «Մայրենի 3» մաս I /3-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝ Վ.Սարգսյան, Կ.Թորոսյան, Հ. Խաչատրյան, Ե.Ջիլավյան Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ և ընդգրկմամբ, համապատասխանի չափորոշային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին, կառուցվի սովորողների նախնական գիտելիքների և հմտությունների վրա: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Այն պետք է հիմքում ունենա համամարդկային և ազգային արժեքները զարգացնող ներուժ, չիակասի ՀՀ օրենքներին: Դասագիրքը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը, բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշով սահմանված կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի ձևավորմանը, նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսպլանով հատկացված ժամաքանակին: Դասագիրքի բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային	հատ	10 625	800	8500000	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

			ապահովվեն շարահղանքի մատչելիությունը, միջառարկայական կապերը: Դասագիրքի բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Նյութերն ու առաջադրանքները պետք է հնարավորություն ընձեռեն կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է համապատասխանի տեքստին, օգնի արտահայտելու տեքստում շարահղված միտքը, փոխհատուցի այն, ինչը դժվար է արտահայտել և ընկալել գրավոր խոսքով: Պատկերազարդումը պետք է ներառի սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Դասագիրքը պետք է զարգացնի կարդալու հմտությունները, կարդացածի ընկալումը, տեքստի բովանդակության ընկալումը, սովորեցնի աշխատել տեքստի շուրջ, առանձնացնել նորածանոթ բառերը և ընկալել դրանց իմաստը: Պետք է զարգացնի քոսքն ու հաղորդակցման կարողությունը, հասկացողություն տա տեքստի մասին, հաղորդի գրական տարրական գիտելիքներ և լեզվական տարրական գիտելիքներ: Դասագիրքը պետք է զարգացնի խոսքն ու հաղորդակցման կարողությունը, հասկացողություն տա տեքստի մասին, հաղորդի գրական տարրական գիտելիքներ և լեզվական տարրական գիտելիքներ: Դասագիրքում պետք է ապահովվեն միջառարկայական կապերը (արվեստ, տեխնոլոգիա, հասարակական գիտություններ): Տեխնիկական չափանիշները Էջերի քանակը՝ - 88 Չափսը՝ - 240 X 165 Տպագրությունը՝ - օֆսեթ 4 գույն, 80գր Կազմը՝ - 4գույն 280 գ. լամինացիա, թերմոսոսինձ, թելակար					
5	22111110-56	Դասագրքեր	Գնման առարկա է հանդիսանում «Մայրենի 3» մաս II /3-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝ Վ.Սարգսյան, Կ.Թորոսյան, Հ. Խաչատրյան, Ե.Ջիլավյան Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ և ընդգրկմամբ, համապատասխանի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին, /կառուցվի սովորողների նախնական գիտելիքների և հմտությունների վրա: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Այն պետք է հիմքում ունենա համամարդկային և ազգային արժեքները զարգացնող ներուժ, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Դասագիրքը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը,	հատ	10 625	850	9031250	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

			կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի ձևավորմանը, նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Դասագրքի բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվեն շարադրանքի մատչելիությունը, միջառարկայական կապերը: Դասագիրքի բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Նյութերն ու առաջադրանքները պետք է հնարավորություն ընձեռեն կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է համապատասխանի տեքստին, օգնի արտահայտելու տեքստում շարադրված միտքը, փոխհատուցի այն, ինչը դժվար է արտահայտել և ընկալել գրավոր խոսքով: Պատկերազարդումը պետք է ներառի սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Դասագիրքը պետք է զարգացնի կարդալու հմտությունները, կարդացածի ընկալումը, տեքստի բովանդակության ընկալումը, սովորեցնի աշխատել տեքստի շուրջ, առանձնացնել նորաձանոթ բառերը և ընկալել դրանց իմաստը: Պետք է զարգացնի խոսքն ու հաղորդակցման կարողությունը, հասկացողություն տա տեքստի մասին, հաղորդի գրական տարրական գիտելիքներ և լեզվական տարրական գիտելիքներ: Դասագիրքում պետք է ապահովվեն միջառարկայական կապերը: Տեխնիկական չափանիշները Էջերի քանակը՝ - 80 Չափսը՝ - 240 X 165 Տպագրությունը՝ - օֆսեթ 4 գույն, 80գր Կազմը՝ - 4գույն 280 գ, լամինացիա, թերմոսոսինձ, թելակար					
6	22111110-61	Դասագրքեր	Գնման առարկա է հանդիսանում «Ես և շրջակա աշխարհը 3», մաս I, /3-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝ Ա.Հովսեփյան, Ա. Կարապետյան, Գ.Հովհաննիսյան, Ն. Տողանյան, Ա. Գյուլբուրդյան, Լ.Ավագյան Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ և ընդգրկմամբ, համապատասխանի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին, կառուցվի սովորողների նախնական գիտելիքների և հմտությունների վրա: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի	հատ	12 537	800	10029600	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

			արժեքները զարգացնող ներուժ, չհավաստի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Դասագիրքը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը, բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշյով սահմանված կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի ձևավորմանը, նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Դասագրքի բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվեն շարադրանքի մատչելիությունը, միջառարկայական կապերը: Դասագիրքի բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Նյութերն ու առաջադրանքները պետք է հնարավորություն ընձեռեն կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Պատկերազարդումը պետք է համապատասխանի տեքստին, օգնի արտահայտելու տեքստում շարադրված միտքը, փոխհատուցի այն, ինչը դժվար է արտահայտել և ընկալել գրավոր խոսքով: Պատկերազարդումը պետք է ներառի սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Դասագիրքում պետք է ապահովվեն միջառարկայական կապերը (արվեստ, տեխնոլոգիա, հասարակական գիտություններ): «Ես և շրջական աշխարհը 3 (մաս 1)» դասագիրքը պետք է ընդգրկի տարրական դպրոցի 3-րդ դասարանի առարկայական ծրագրի առաջին կեսի նյութը: Տեխնիկական չափանիշները Էջերի քանակը՝ - 72 Չափսը՝ - 240 X 165 Տպագրությունը՝ - օֆսեթ 4 գույն, 80գր Կազմը՝ - 4գույն 280 գ. լամինացիա, թերմոսոսինձ, թելակար					
7	22111110-62	Դասագրքեր	Գնման առարկա է հանդիսանում «Ես և շրջակա աշխարհը 3», մաս II, /3-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝ Ա.Հովսեփյան, Ա. Կարաօետյան, Գ.Հովհաննիսյան, Ն. Տողանյան, Ա.Գյուլբուրադյան, Լ.Ավագյան Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ և ընդգրկմամբ, համապատասխանի չափորոշային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիք զարգացման առանձնահատկություններին, կառուցվի սովորողների նախնական գիտելիքների և հմտությունների վրա: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Այն պետք է հիմքում ունենա համամարդկային և ազգային արժեքները զարգացնող ներուժ,	հատ	12 537	850	10656450	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

